

**ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ\***

*Բանասիրական գիտությունների թեկնածու  
ԳԱԱ Մ. Արեղյանի անվ. գրականության ինստիտուտ  
m.sargsyan.msy@gmail.com  
DOI: 10.54503/1829-4073-2022.3.197-217*

## **ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՀԱՆՐԱՄԱՐԴԿԱՅԻՆ» ԵՎ «ԳՐԱՆԴԻՈՋ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ**

***Բանալի բառեր***<sup>\*</sup> ստեղծագործական նախագիծ, փիլիսոփայություն-վարդապետություն, տիեզերք-մարդ մոդել, հայեցակարգի ուրվագիծ, բազմաբաղադրիչ կառուցվածք, ստեղծագործության համատեքստ, «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում»:

### **Ներածություն**

«Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրով անտիպ երկը Ավ. Իսահակյանի վաղ շրջանի ստեղծագործական նախագծերից է: Այն երբևէ չի եղել ուսումնասիրողների մասնավոր քննության առարկա: Առկա մասնակի դիտարկումներն էլ ոչ միայն չեն նպաստել երկի մասին գոնե նախնական, ոչ խորը պատկերացումներ ձևավորելուն, չեն հստակեցրել գաղափարա-գեղարվեստական մոտավոր պատկերը, այլև ամրագրել են հիմնարար տարակարծություններ երկի ավարտունության, ժանրի, բնագրի, հեղինակի այլ ստեղծագործությունների հետ առնչության, համատեքստի վերաբերյալ: Սույն աշխատանքի նպատակն է հիմնականում գրական աղբյուրների՝ բնագրերի, հեղինակի վկայությունների և ուսումնասիրողների տեսակետների վերլուծության, համադրման, համեմատության միջոցով փորձել գտնել տարակարծությունների առարկա դարձած և երկին առնչվող որոշ այլ հիմնարար հարցերի պատասխաններ և ստեղծել «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում»-ի բազմակողմանի քննության և արժևորման հիմքեր:

**Երկի հեղինակային նախագիծը և դրա վերաբերյալ իսահակյանագետների տարակարծությունները**

<sup>\*</sup> Հոդվածը ներկայացվել է 06.04.22, գրախոսվել է 15.04.22, ընդունվել է տպագրության 01.12.22:

### Ավետիք Իսահակյանի «հանրամարդկային»...

Ավ. Իսահակյանի վաղ շրջանի ստեղծագործական նախագծերից բացառիկ և առանցքային բնույթով առանձնանում է «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրով անտիպ երկը: Հեղինակն ինքն արձանագրել է իրողությունը ստեղծագործական ծրագրերի վերաբերյալ 1898 թ. հետևյալ գրառմամբ. «Գրելու եմ երկու խոշոր, մեծ, գրանդիոզ երկեր-պոեմաս, որ ամփոփեն հայկական շարժումը... և «Նոր ուխտս», Ավետարանս՝ «Յոթն օր ապատում...»....

Յուր տարօրինակության համար հենց այդ նշանավոր, հանրամարդկային երկս պիտի սկսեմ «Ա՛խ»-ով»<sup>1</sup>:

Այսպես՝ «Յոթն օր...» մտահղացում-նախագիծը հեղինակն անվանում է «Նոր ուխտս», «Ավետարանս»-ի օգնությամբ էլ որոշակիորեն ուրվագծում է բովանդակային բուն էությունը՝ վարդապետություն: Ըստ ձևի՝ երկը նախագծվում է «խոշոր, մեծ, գրանդիոզ»<sup>2</sup>: Գրառման շարունակությամբ ներկայացվում է երկի ևս մի քանի բնութագրիչ՝ «տարօրինակ» «նշանավոր» և, ի վերջո՝ «հանրամարդկային»:

Որոշումն արձանագրելուց բացի՝ Իսահակյանը դրան նախորդող և հաջորդող հատվածներում<sup>3</sup> կարծես հստակեցնում է նախագծի բուն գաղափարը, ի մի բերում հայեցակարգի ուրվագիծը:

Նախագծի մասին երիտասարդ հեղինակի վերոհիշյալ ամբողջ շարադրանքը վկայում է բացառիկ բովանդակություն-ձև-նշանակություն համադրությամբ համաշխարհային-համամարդկային առումով կարևոր գործ ստեղծելու նրա հավակնոտ մտադրությունը:

1898 թ. «Օգոստոս, Օդեսա» գրառման մեջ երկի առնչությամբ «գրել» բայն ապառնի ժամանակով («գրելու եմ») օգտագործելը առաջին հայացքից տարընկալման տեղիք է տալիս: Բանն այն է, որ «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրով ծավալուն բնագրի մասին Իսահակյանը գրավոր վկայել է՝ «Արտագրված է 1898-ին, հունվարին, Ալեքսանդրապոլում», և «Սա գրել եմ բանդից հետո. 1897-ին, մայիսի վերջերին, հունիսի սկզբներին.- առաջին փորձը 1895. հոկտեմբերին»<sup>4</sup>: Այսինքն՝ ապառնիով էր գրում

<sup>1</sup> Իսահակյան 1977, 257:

<sup>2</sup> Ասել է՝ *վիթխարի, հսկայական, նաև հոյակապ, փառավոր*:

<sup>3</sup> Տե՛ս Իսահակյան 1977, 256–258՝ սկսած 1898 թ. «Օգոստոս, Օդեսա» գրառման առաջին՝ «Եվ ես մենակ ու մոայլ թափառում էի երկրի բոլոր ոլորտներում» պարբերությունից մինչև «...ա՛խ, ա՛խ, տիեզերքից մեծ Ա՛խ...»-ը»:

<sup>4</sup> Տե՛ս ԳԱԹ, ԱԻՖ 254-II, 1-69:

երկի մասին, որն արդեն երեք տարվա ստեղծագործական աշխատանքի պատմություն ուներ՝ որոշակի արդյունքով: Ավելին՝ նշված բնագրից (այսուհետև՝ Բ բնագիր) բացի՝ կար «Հատվածներ «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրով անպատրաստ գրքից» խիստ ուշագրավ խորագրով մոտավորապես հինգէջանոց հեղինակային երկմասնյա բնագիր (այսուհետև՝ Բ բնագիր). առաջին մասը՝ թվագրված 1895 թ., երկրորդը՝ 1897թ<sup>5</sup>: Ուրեմն՝ Իսահակյանի խոսքը վերաբերում էր երկի վրա աշխատանքը շարունակելուն և ավարտելուն: Դա է վկայում իր գրական ծրագրերի մասին հետևյալ ծանուցումը. «...Բոլոր հոգով պիտի կենտրոնանամ այն մեծ նյութի, գործի վրա, որ անունը <«Յոթ օր ապատում, յոթ գիշեր անապատում»> եմ դրել, որտեղ պիտի մտցնեմ բոլոր իմ հիմարություններն ու ոչ-հիմարությունները... Շա՛տ-շատերի մոտ եմ կարդացել այդ գրվածքի կոնսպեկտն ու մշակված կտորները, և բոլորն էլ գովել են... Մենակ այդ պիտի գրեմ և վերջ տամ գրելու և գոհ կլինեմ, որ մեռնիմ...»<sup>6</sup>:

Հետաքրքիր է, և թերևս հարկ է արձանագրել, որ Իսահակյանի այդքան կարևորած, գրեթե կյանքի գործ համարած ստեղծագործական «գրանդիոզ», «հանրամարդկային» նախագիծը չի արժանացել իսահակյանագիտության առանձնակի ուշադրությանը: Մինչդեռ մտահղացումն ինքնին և դրա իրականացման հայտնի փորձերը ոչ միայն ուշագրավ են իբրև հենց «Յոթն օր...» երկի-գրքի բաղադրիչներ-մասեր, այլև կարևոր են Իսահակյան մտածողին, ստեղծագործողին, բանաստեղծին ընդհանրապես և մասնավորապես նրա վաղ շրջանի հայտնի ու անհայտ որոշ երկերի համատեքստը հասկանալու առումով:

Եվ այնուամենայնիվ, եղել են ընդհանուր և հպանցիկ անդրադարձներ՝ ոչ միանման, այլև զգալի տարբեր հետևություններով:

Այսպես՝ Արամ Ինճիկյանը Ավ. Իսահակյանի «Հիշատակարան»-ի «Ծանոթագրություններ»-ում գրում է. «Պահպանվել է այդ **անավարտ խոհա-փիլիսոփայական երկի** ինքնագիրը, որի լրիվ խորագիրն է՝ «Յոթ օր ապատում, յոթ գիշեր անապատում»<sup>7</sup> (ընդգծ.՝ Մ.Ս.): Մեկ այլ առիթով էլ նշել է, որ այդ

<sup>5</sup> ԳԱԹ, ԱԻՖ 8-Ի:

<sup>6</sup> Իսահակյան, 2020, 39:

<sup>7</sup> Իսահակյան 1977, 458: Ինճիկյանը չի նշել ինքնագրի համարը, ուստի դժվար է ստույգ իմանալ ինչ տեքստի մասին է խոսքը. Բ բնագրի՞ (ինքնագրի՞ ԳԱԹ, ԱԻՖ 8-Ի), թե՞ մեզ անհայտ այլ ինքնագրի կամ գուցե Ա բնագրի՞ (ոչ ինքնագրի՞ ԳԱԹ, ԱԻՖ 254-Ո, էջ 1–69):

խորագրի ներքո ամփոփված են **աֆորիզմներ, փիլիսոփայական-ֆանտաստիկ մանրապատումներ**<sup>8</sup> (ընդգծ.՝ Մ.Ս.):

Ալբերտ Մուշեղյանը, վկայակոչելով «ինքնագիրն» (նա այդպես է կոչում Ա բնագիրը) ու «ինքնագրին» հեղինակի ձեռագիր նշումը՝ գրության ժամանակի մասին<sup>9</sup>, «Յոթն օր...»-ը համարել է **ավարտուն պոեմ**<sup>10</sup> և դիտարկել «Աբու-Լալա Մահարի» պոեմի առնչությամբ<sup>11</sup>:

Ավիկ Իսահակյանը «Յոթն օր...»-ի մտահղացումն առնչել է մեկ այլ երկի «Մասսա Մանուկ»-ին<sup>12</sup>, իսկ ավելի ուշ համարել առանձին գործ՝ «անտիպ **արձակ պոեմ**», «**լիովին ավարտուն երկ**»...»<sup>13</sup> (ընդգծ.՝ Մ.Ս.):

Մարի Զաքարյանի անդրադարձը հեղինակի ստեղծագործական որոնումների ու ծրագրերի առնչությամբ է՝ «1898 թ. օգոստոսյան նոթագրությամբ» հղումով և միայն. «Իսահակյանի արխիվում **անավարտ** վիճակում է մնացել «Յոթն օր ապատում, յոթ գիշեր անապատում» **գրվածքը**»<sup>14</sup> արձանագրումով (ընդգծ.՝ Մ.Ս.):

«Յոթն օր...»-ին վերաբերող տարակարծությունները գուցե պայմանավորված են երկին առնչվող փաստական, աղբյուրագիտական նյութերի սղությամբ. հայտնի չէ հեղինակի կենդանության օրոք այդ վերնագրով տպագրված որևէ բնագիր, Իսահակյանի արխիվից հայտնաբերվել է նշված վերնագիրը կրող երկու անտիպ նյութ միայն, և հայտնի է երկի մասին հեղինակի լոկ մեկ-երկու հիշատակում: Ակնհայտ է սակայն, նաև այն, որ բազմակարծության հիմնական պատճառը առկա նյութերի տարընթերցումներն են: Այնպես որ անգամ վերոնշյալ սուղ նյութերի հանգամանալի ուսումնասիրությունը ոչ միայն վերացնում է որոշ առանցքային հարցերի շուրջ տարակարծությունների հիմքերը, այլև ստեղծում է մասնավորապես երկի և ընդհանրապես Իսահակյանի ստեղծագործության վերաբերյալ նոր բացահայտումների նախադրյալներ:

<sup>8</sup> Տե՛ս Ինճիկյան 1977, 65:

<sup>9</sup> Տե՛ս Մուշեղյան 1983, 278:

<sup>10</sup> Մուշեղյան 1983, 275:

<sup>11</sup> Մուշեղյան 1983, 278:

<sup>12</sup> Տե՛ս Իսահակյան 2000, 382–383

<sup>13</sup> Տե՛ս Իսահակյան 2008, 614:

<sup>14</sup> Զաքարյան 1999, 292: Ցավոք, աղբյուրի մասին ավելին նշված չէ, և հնարավոր չէ պարզել, թե մասնավորապես ո՛ր բնագիրը կամ բնագրերն են դարձել այս կարծիքի հիմքը:

**Երկի բնագրերը և համադրեցությունը**

Անտարակույս, որևէ գրավոր ստեղծագործության քննության, ուսումնասիրության և արժևորման համար գլխավոր, առաջնային նյութը բնագիրն է: Եվ ուրեմն՝ նախ բնագրի մասին: Ինչպես արդեն նշվել է, առայժմ հայտնի է նախագծի-երկի երկու բնագիր: Մեկը «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրված ձեռագիրն է՝ Ա բնագիրը, որը հեղինակի ինքնագիրը չէ, սակայն վավերացված է նրա՝ «Արտագրված է 1898-ին, հունվարին, Ալեքսանդրապոլում» և «Սա գրել եմ բանդից հետո. 1897-ին, մայիսի վերջերին, հունիսի սկզբներին... առաջին փորձը 1895. հոկտեմբերին» ձեռագիր ծանոթագրություններով<sup>15</sup>: Մյուսը «Հատվածներ «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրով անպատրաստ գրքից» խորագրի ներքո մեկտեղված անվերնագիր, հռոմեական I և II թվանշաններով պարզապես համարակալված՝ «Մի մարդ եկավ հեռավոր տեղերից...» (թվագրված՝ 1895 թ.) և «Մի անգամ երկրի բոլոր անտուն...» (թվագրված՝ 1897 թ.), երկու հատվածի ինքնագիրն է<sup>16</sup>: Բ բնագիրը: Վերն ասվածից ակնհայտ է դառնում, որ բնագրերն ունեն երկու էական տարբերություն: Մեկն այն է, որ Ա բնագիրը կրում է երկի վերնագիրն ամբողջապես, իսկ Բ բնագիրը՝ միայն մասնակիորեն, մյուս տարբերությունը՝ առաջինը միավոր է, երկրորդը՝ կոտորակ: Եվ տպավորություն է ստեղծվում, որ Ա բնագիրն ինքնաբավ, անկախ ամբողջն է, Բ-ն՝ դրա ոչ ինքնուրույն, կախյալ մասը: Մինչդեռ իրականում դրանք բովանդակային, կառուցվածքային, ժանրային, ոճական առումներով տարբեր, իրարից անկախ միավորներ են: Ընդամին, գրեթե միաժամանակ ստեղծված այս բնագրերն «այն մշակված կտորներ»-ից են, որոնք հեղինակի մտահղացմամբ պիտի դառնային «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» գրքի բաղադրիչներ: Ընդ որում Բ բնագիրը մշակված էր այնքան, որ Իսահակյանը փորձել է տպագրել և հավանաբար 1897 թ. վերջերին ուղարկել է «Մուրճ» հանդեսի խմբագրություն<sup>17</sup>:

«Մուրճ»-ը, սակայն, չի տպագրել Բ բնագիրը<sup>18</sup>: Այն առաջին անգամ հրատարակվել է հետմահու՝ 1975 թ.<sup>19</sup>, ապա ինքնագրից և **որպես տարբե-**

<sup>15</sup> ԳԱԹ, ԱԻՖ 254-II, 1-69:

<sup>16</sup> ԳԱԹ, ԱԻՖ 8-I:

<sup>17</sup> Թերևս դա է պատճառը, որ Բ բնագրի վերնագիրն առավել ճշգրիտ է:

<sup>18</sup> Ինքնագիրը երկու տասնամյակ մնացել է հանդեսի արխիվում, 1927 թ. փոխանցվել Պետական կուլտուր-պատմական թանգարանի պատմագրական բաժին (այժմ՝ Ե. Չարեն-

### **Ավետիք Իսահակյանի «հանրամարդկային»...**

րակ՝ 2014 թ. Ավ. Իսահակյանի ԵԼԺ 5-րդ հատորում<sup>20</sup>: Այնինչ, Ա և Բ բնագրերի, դրանց և «Յոթն օր...» նախագծի «ծագումնաբանության» ու պատմության, երկի մասին հեղինակի հրապարակած տեղեկությունների առավել հանգամանալի ուսումնասիրությամբ բացահայտվում է, որ «Մի մարդ եկավ հեռավոր տեղերից...» և «Մի անգամ երկրի բոլոր անտուն և...» հատվածները նախագծված երկի ոչ թե այլընտրանքային, այլ լիիրավ բաղադրիչներ են ճիշտ այնպես, ինչպես Ա բնագիրը: Հետևաբար, ավելի ճիշտ կլիներ և՛ Ա, և՛ Բ բնագրերը տպագրել որպես բուն բնագրեր՝ միավորելով «Հատվածներ «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրով անպատրաստ գրքից» ընդհանուր խորագրի ներքո:

Երբ Իսահակյանը հրատարակության էր ուղարկում Բ բնագիրը, արդեն կար նաև «1897-ին, մայիսի վերջերին, հունիսի սկզբներին» գրված առավել ամբողջական թվացող և ծավալուն Ա բնագիրը, որ տպագրելու հեղինակի ցանկության կամ փորձի մասին հայտնի չէ: Առաջին անգամ այն հրատարակվել է 2014 թ. Իսահակյանի ԵԼԺ 5-րդ հատորում՝ որպես արձակ պոեմ<sup>21</sup>: Ա բնագիրը կարելի է, իհարկե վերապահումով, արձակ պոեմ համարել, քանի որ, կառուցված լինելով արձակ և չափածո բանաստեղծության յուրօրինակ համադրությամբ, այն դուրս է նշված բնորոշման սահմաններից:

Մինչդեռ ամբողջ երկին, ավելի ճիշտ երկի մտահղացում-նախագծին դժվար կամ թերևս անհնար է ժանրային ճշգրիտ բնորոշում գտնել այնպես, ինչպես Իսահակյանի մի շարք երկերի և համաշխարհային գրականության բազմաթիվ ստեղծագործությունների համար, որոնք «խախտում» են դասական, ընդունված կանոններն ու օրինաչափությունները, զուգորդում տարբեր ժանրերի տարրեր կամ որոնց «ինչ»-ի ու «ինչպես»-ի բազմաբարդ համադրությունը չի տեղավորվում մի եզրույթում: Ի դեպ, հեղինակն ինքը որևէ ժանրային բնորոշում չի տվել «Յոթն օր...»-ին. անվանել է պարզապես «գիրք»<sup>22</sup> «երկ»<sup>23</sup>, «նյութ», «գործ», «գրվածք»<sup>24</sup>՝ գուցե և ցանկանալով ընդգծել երկի՝ բոլոր առումներով բացառիկ, ոչ սովորական լինելը: Իսկ որ մտահղացվել-նա-

---

ցի անվան գրականության և արվեստի թանգարան) և քառասուն տարի անց՝ 1937 թ. «վերադարձվել» հեղինակին ՏԵՍ Ավետիսյան 1975, 103:

<sup>19</sup> Սովետական գրականություն 1975, 107–109:

<sup>20</sup> Իսահակյան 2014, 853–857:

<sup>21</sup> Իսահակյան 2014, 339–369:

<sup>22</sup> ՏԵՍ Իսահակյան 2014, 339–369 և Իսահակյան 1977, 236–238:

<sup>23</sup> ՏԵՍ Իսահակյան 1977, 257:

<sup>24</sup> ՏԵՍ Իսահակյան 2020, 39:

խագծվել էր որպես բացառիկ, ոչ սովորական երկ-գիրք, գլխավորապես փաստում են նրան վերագրվող «Նոր ուխտ», «Ավետարան» իմաստները: Այսինքն՝ այն պետք է ներկայացնեն Իսահակյանի ստեղծելիք նոր համամարդկային վարդապետություն-փիլիսոփայություն-գաղափարաբանություն-կրոնը, ունենար մարդափրկիչ-աշխարհափրկիչ առաքելություն: Հենց դա է անուղակիորեն հաստատում հեղինակի՝ վաղ շրջանի փիլիսոփայական իր որոնումներին 1938 թ. հետահայաց այս անդրադարձը. «Երիտասարդությանս տարիներին տարբեր փիլիսոփայական սիստեմներով շատ եմ տարվել՝ պեսիմիզմ, անարխիզմ.... Հափշտակվել եմ Բուդդայով, Շոպենհաուերով, մանավանդ Նիցշեով. **մարդկությանը ամեն տեսակ ճնշումներից, տառապանքներից ձերբազատելու ուղիներ էի որոնում:** ....Ինձ ոգևորում էր Նիցշեի բողոքող, ընդվզող ոգին: Տիրող հասարակության կաշկանդումներից մարդուն ձերբազատելու ձգտումն էի տեսնում նրա մեջ: Բայց ավելի շատ ինձ գրավում էր Նիցշեի լակոնիկ, աֆորիստիկ, կուռ ոճը»<sup>25</sup> (ընդգծ.՝ Մ.Ս.): Այսու դարձյալ ոչ ուղղակի, խոստովանում-հաստատում է նաև երկ-գրքի անթաքույց առնչությունը գերմանացի հանճարին:

Եվ ուրեմն, «Յոթն օր...»-ն ըստ երևոյթին պիտի լիներ գրական-փիլիսոփայական-քարոզչական երկ՝ Իսահակյանի իմացած, ուսումնասիրած կրոնական ուսմունքների սրբազան գրքերի հանգույն ինքնօրինակ ոչ միայն բովանդակային, այլև կառուցվածքային, ոճական և ծավալային առումներով՝ «խոշոր, մեծ, գրանդիոզ»:

Առկա փաստական նյութը հնարավորություն է ընձեռում ենթադրելու, որ «Յոթն օր...»-ը պիտի լիներ բազմաբաղադրիչ՝ կազմված տարասեռ առանձին մասերից, արձակի և չափածոյի, բանաստեղծության, քարոզի, զրույցի և այլակերպ տեքստերի համազուգակցմամբ անօրինակ ստեղծագործություն, գիրք, որ համադրելի լիներ հանրամարդկային հին ու նոր վարդապետություններին՝ ինչպես Նոր ուխտ-Նոր կտակարան-Ավետարանին (անշուշտ, նաև Հին ուխտի հետ օրգանական կապով), այնպես էլ որպես նոր մարդու՝ գերմարդու վարդապետություն ստեղծված և ընդունված, նոր ժամանակների մարդկային մտքի բացառիկ ստեղծագործություններից մեկին՝ իրեն անսահման ոգեշնչած և սիրելի գերմանացի փիլիսոփա, բանաստեղծ Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքին, բայց և տարբեր նրանցից: Ա բնագիրը, ի դեպ, ակնհայտորեն կրում է և՛ առաջինի, և՛ առավելապես երկրորդի գաղա-

<sup>25</sup> Ինճիկյան 1977, 228–229:

փարական, գեղագիտական, խորհրդանշանային և ոճական ազդեցությունը: Աչքի են զարնում կառուցվածքային որոշ զուգահեռներ: Իսահակյանի բնագիրը կազմված է տասնմեկ մասից՝ բոլորը համարակալված հոմեական թվանշաններով, և մեծ մասը՝ ութը, նաև վերնագրված՝ վերնագրերի անփոփոխ հաստատուն բաղադրիչ ունենալով «երգ»-ը՝ «Պերճ-երգ: II», «Պար-երգ: III», «Հպարտ-երգ: IV», «Կյանքի ծննդյան երգ: V», «Մեր երգի երգը: VIII», «Իմ մտքի երգը: IX», «Ընկերի երգը: X», «Վրեժի երգ: XI»: Նիցշեի երկի կառուցվածքային մասեր ևս անվանված են «երգ» (գերմ. Lied)՝ Das Nachtlied (Գիշերվա երգը), Das Tanzlied (Պարերգը), Das Grablied (Գերեզմանի երգը), Das andere Tanzlied (Մյուս պարերգը), Die sieben Siegel (Oder: das Ja- und Amen-Lied) (Յոթ կնիքները (կամ Այո-ի և Ամեն-ի երգը), Das Lied der Schwermuth (Տրտմության երգը), Das Nachtwandler-Lied (Գիշերաշրջիկի երգը)<sup>26</sup>: Այս և վերը նշված մյուս զուգահեռների, «Յոթն օր...»-ի վրա Նիցշեի ազդեցության քննությունն առանձին ուսումնասիրության չափազանց հետաքրքիր նյութ կարող է լինել:

Բայց «Յոթն օր...» նախագիծը հասկանալու-արժևորել-վերլուծելու համար հարկ է նախ հնարավորինս համալրել, ի մի հավաքել բնագրային խճանկարը: Եվ առաջին խնդիրը գրքի առայժմ հայտնի ամենամեծ բաղադրիչը՝ Ա բնագիրը, առավել ամբողջական տեսքի բերելն է, ապա նաև՝ ստեղծման պատմությունը ըստ հնարավորին լրացնելը, Իսահակյանի այլ ստեղծագործությունների, տեսքերի հետ թերևս առանցքային այս բնագրի որոշ օրգանական կապեր, առնչություններ բացահայտելը:

Բանն այն է, որ թեև Ա բնագիրը թվում է ամբողջական, ավարտուն, լիակազմ, և չկա ո՛չ հեղինակի, ո՛չ արտագրողի որևէ հիշատակում կամ բնագրում որևէ նշում, գրառում, որոնք հիմք կտային հակառակը պնդելու, այդուհանդերձ, կան դրա այլ հիմքեր:

Այսպես, IX՝ «Իմ մտքի երգը»-ը սկսվում է «Հեռու ամերում միտքըս թափառեց...» տողով<sup>27</sup>, որն ավարտվում է կախման կետերով: Հաջորդ՝ «Դու ուզում ես երկրին մեխել իմ թևերը...» սկզբով պարբերության՝ նախորդ տողի հետ իմաստային որոշակի խզումն էլ հարուցում է անմիջնորդական շարունակություն լինելու կասկած: Այն խորացնում է բնագրի մասերից՝ «երգ»-երից շատերի կառուցվածքի մի առանձնահատկություն՝ չափաժող հատվածով բացվե-

<sup>26</sup> Տե՛ս Nietzsche 1907, 1–3, Նիցշե 2015, 609–611:

<sup>27</sup> Իսահակյան 2014, 360:



լը, որը միաժամանակ հուշում է «միջնորդին» և օգնում լրացնելու տեքստը՝ կախման կետերը փոխարինելով չափաժողոված հատվածի շարունակությամբ: Ամենայն հավանականությամբ, Իսահակյանի առաջին՝ «Երգեր ու վերքեր» ժողովածուի (1898)՝ «Իմ օրագրից» բաժնի-շարքի II՝ «Հեռու ավերում միտքըս թափառեց» բանաստեղծության տեքստն<sup>28</sup> լինելու էր Ա բնագրի լիակազմ տարբերակում:

Ո՛չ վերոհիշյալ առաջին, ո՛չ էլ հետագա հեղինակային և հետմահու հրատարակություններում որևէ կերպ չի հիշատակվել բանաստեղծության առնչությունը «Յոթն օր...»-ին. այն շարունակել է իր ինքնուրույն կյանքը<sup>29</sup>:

Նույն կերպ է կառուցված Ա բնագրի հաջորդ մասը: «Ընկերի երգ» վերնագրված X մասը սկսվում է կախման կետերով ավարտվող «Այս ծառի տակ – զով առվի մոտ...» տողով, որին հաջորդում է «Տեսա մաքուր գետում լողանում էին Կույսեր...» սկզբով պարբերությունը<sup>30</sup>: Հաջորդում է, սակայն չի շարունակում: Առաջին տողի՝ կախման կետերին փոխարինելիք շարունակության փնտրտուքի արդյունքում գտնվում է «Ընկերի երգ»-ի սկզբի համար նախատեսված թերևս միակ, անտարակույս տարբերակը. այն է՝ «Նվեր ընկերիս» ստեղծագործությունը<sup>31</sup>: Այն առաջին անգամ տպագրվել է 1898 թ. «Երգեր ու վերքեր» ժողովածուում, որում զետեղված է «Ալազյազի մանիներից» շարքի վերջին՝ VIII մաս-բանաստեղծությունից հետո և «Աստղիկ ու ծաղիկ» մաս-շարքից առաջ, առանց թվագրության: Ամենայն հավանականությամբ, հենց այս տեքստը պիտի տեղ գտներ Ա բնագրում, քանի որ հայտնի չեն որևէ ինքնագիր, սրանից առաջ գոյություն ունեցած այլ տարբերակ կամ տեքստ: Հեղինակը տպագրել է այն հետագայում ևս երկու անգամ միայն՝ 1903 թ. և

<sup>28</sup> Իսահակեան 1898, 42: Բանաստեղծությունը թվագրված է՝ «1897 թ. 22 հուլիս. Հաղիճ», ասել է թե՛ գրվել է Ա բնագրի պատրաստ լինելուց հետո: Ա բնագրում բանաստեղծության առաջին տողը գրելիս, հավանաբար, եղել է միայն դրա նախնական-առաջին սևագիր տարբերակը, որի գրության ժամանակը Ա. Ինճիկյանը և Ավիկ Իսահակյանը նշում են 1896 թ. հունվարի 2-ը՝ որևէ այլ տեղեկություն չհայտնելով այդ տարբերակի մասին: (Տե՛ս Իսահակյան 1973, 394 և Իսահակյան 2003, 685):

<sup>29</sup> Տե՛ս Իսահակյան 2003, 685:

<sup>30</sup> Իսահակյան 2014, 362:

<sup>31</sup> Իսահակեան 1898, 28:

### Ավետիք Իսահակյանի «հանրամարդկային»...

1908 թ. այլ՝ «Ընկերիս» վերնագրով, որոշ բնագրային փոփոխություններով և դարձյալ առանց «բացահայտելու» առնչությունը «Յոթն օր...»-ին<sup>32</sup>:

1898 թ. «Երգեր ու վերքեր»-ում տպագրված ևս մեկ գործ՝ 1895 թ. հունիսի 13-ին գրված «Անհուն երկնում ջինջ աստղերը...» բանաստեղծությունը («Իմ օրագրից» բաժնում-շարքում VII. համարակալումով է)<sup>33</sup> չնչին բնագրային տարբերություններով նախ Ա բնագրի մաս էր կազմել՝ բացելով IV մասը՝ «Հպարտ-երգ:»-ը<sup>34</sup>: Հետագա հեղինակային հրատարակություններում այն տպագրվել է որպես առանձին բանաստեղծություն<sup>35</sup>՝ կրկին չհիշեցնելով «Յոթն օր...»-ի հետ առնչության մասին: Թեև Ա բնագրում փաստացի ներառված է «Իմ օրագրից»-ի միայն երկու բանաստեղծություն, սակայն ակներև է ամբողջ շարքի գաղափարական, խորհրդանշանային հարազատությունը «Յոթն օր...»-ին՝ սկսած Ֆ. Նիցշեից ընտրված բնաբանից<sup>36</sup>: Եվ չափազանց մեծ է հավանականությունը, որ շարքի մյուս բանաստեղծությունները ևս<sup>37</sup> ներհյուսվելու էին «Յոթն օր...»-ին:

Իսահակյանն իր բանաստեղծական առաջին ժողովածուն պատրաստել<sup>38</sup> և տպագրել է՝ «Յոթն օր...»-ը գրելուն զուգահեռ, և երկրորդի տեքստում առկա բանաստեղծությունների՝ առաջինում տպագրվելը բնավ չէր նշանակում, որ դրանք այլևս դուրս էին մնալու երկրորդից, կամ երկրորդն իբրև նախագիծ չեղարկվել էր: «Յոթն օր...» երկի վրա աշխատանքը շարունակվել է նաև Ա բնագրի գոյությունից և «Երգեր ու վերքեր»-ը հրատարակության պատրաստելուց հետո, ինչը վկայում են «Յոթն օր...»-ի մասին 1898 թ. օգոստոսի գրառումն ու նամակը:

«Յոթն օր...»-ի Ա բնագրի մաս են կազմում նաև չափաժողովարժ և արձակ անտիպ հատվածներ-տեքստեր, որոնց՝ երկին պատկանելության կամ առնչության մասին այլ վկայություն հայտնի չէ: Առկա փաստական սուղ տվյալներն էլ

<sup>32</sup> Տե՛ս Իսահակեան 1903, 30, Իսահակեան 1908, 111, Իսահակյան 2014, 10: Վերջինի «Ծանոթագրություններ»-ում է առաջին անգամ արձանագրվել ստեղծագործության առնչությունը՝ «Յոթն օր...»-ին (Իսահակյան 2014, 895–896):

<sup>33</sup> Իսահակեան 1898, 46:

<sup>34</sup> Իսահակյան 2014, 347:

<sup>35</sup> Տե՛ս Իսահակյան 2003, 110, 539:

<sup>36</sup> Իսահակեան 1898, 41:

<sup>37</sup> Իսահակեան 1898, 41–48:

<sup>38</sup> «Երգեր ու վերքեր»-ի տպագրության համար գրաքննության թույլտվությունը թվագրված է «1897 սեպտեմբերի 2» (Տե՛ս Իսահակեան 1898, տիտղոսաթերթի հակառակ երես):

հնարավորություն չեն ընձեռում պարզելու՝ դրանք սերել են «Յոթն օր...»-ից, թե՛ հետագայում միայն միացվել նրան:

Այսպես՝ Ա բնագիրը եզրափակող XI. «Վրեժի երգ:» մասը բացում է «Դու ինձ ասում ես «Տոկալ սովորիր...» տողը, որի վերջի կախման կետերը դարձյալ հուշում են չմեջբերված շարունակություն: Ինչպես վկայում են ինքնագրերը, հեղինակն այս հատվածը երկար և բծախնդրորեն է մշակել<sup>39</sup>:

«Վրեժի երգ»-ի առաջին հատվածի բնագրային հիմքը, ամենայն հավանականությամբ, եղել է արձակ տարբերակը, որի տեքստի մեծ մասը՝ երրորդից մինչև վերջին՝ վեցերորդ պարբերությունը<sup>40</sup> որոշ բնագրային տարբերություններով ներառվել է վերոնշյալ հատվածում<sup>41</sup>: Հավանաբար չափաժողի էր վերածվելու Ա ինքնագրի առաջին երկու պարբերությունը<sup>42</sup>:

Հետագայում հեղինակը, ըստ երևույթին, որոշել է ընդարձակել չափաժո հատվածը: Այդպես ենթադրելու տեղիք են տալիս «Յոթն օր...»-ի Ա բնագրին ժամանակագրորեն հաջորդած Բ և Գ ինքնագրերը, որոնցից առաջինում որոշ բնագրային փոփոխություններով չափաժողի է վերածված Ա ինքնագրի ամբողջ տեքստը, երկրորդում՝ առաջինից չորրորդ պարբերությունները: Ի դեպ, վերոնշյալ բոլոր երեք տարբերակներն էլ հեղինակն անտիպ է թողել<sup>43</sup>:

«Յոթն օր...»-ում մաս ունի նաև «Տեսե՛ք իմ սիրելի մայրիկիս...» արձակ բանաստեղծությունների անտիպ շարքը<sup>44</sup>, որն առաջին անգամ տպագրվել է «Հիշատակարան»-ում՝ որպես 1895 թ. հոկտեմբերի 7-ին, այսինքն՝ Ա բնագրի

<sup>39</sup> Պահպանվել է «Դուք ինձ ասում եք. «Տոկալ սովորիր...» սկզբնատողով երեք ինքնագիր. մեկը՝ արձակ բանաստեղծություն՝ թվագրված «1896 թ. հուլիս, Բանտ-Երևան» (ԳԱԹ, ԱԻՖ 8-I, 5-6) (Ա ինքնագիր), երկուսը՝ չափաժո, որոնցից մեկը՝ առանց գրության ժամանակի և վայրի հիշատակման, գրված, ամենայն հավանականությամբ, 1897-ի ամռանը (ԳԱԹ, ԱԻՖ 1-II բ, 31-32) (Բ ինքնագիր), մյուսը՝ «1897, Ալեքսանդրապոլ» նշումով (ԳԱԹ, ԱԻՖ 3-II, 32) (Գ ինքնագիր):

<sup>40</sup> Իսահակյան 2014, 373-374, 955:

<sup>41</sup> Տե՛ս Իսահակյան 2014, 364՝ «XI. Վրեժի երգ:», առաջին տողից մինչև 164-րդ պարբերություն:

<sup>42</sup> Տե՛ս ԳԱԹ, ԱԻՖ 8-I, 5-6 նաև Իսահակյան 2014, 373: Տե՛ս նաև Իսահակյան 2014, 955:

<sup>43</sup> «Դուք ինձ ասում եք. «Տոկալ սովորիր...»-ը հետմահու տպագրվել է որպես ինքնուրույն գործ: Առաջին անգամ նշված բոլոր տարբերակները տպագրվել են 2006 թ. (տե՛ս Վարդանյան 2006, 239-240, ապա՝ չափաժո տարբերակները՝ Իսահակյան 2011, 173 և 425-426, արձակ տարբերակը՝ Իսահակյան 2014, 373-374: Միայն վերջինի ծանոթագրությունում է նշվել առնչությունը «Յոթն օր...»-ին (Տե՛ս Իսահակյան 2014, 955):

<sup>44</sup> Տե՛ս Իսահակյան 2014, 328-333:

### Ավետիք Իսահակյանի «հանրամարդկային»...

առաջին փորձի ժամանակահատվածում արված գրառում<sup>45</sup>: Շարքի՝ «Մայրիկ, դու իմ փոքր հասակում....» տողով սկսվող և «Ահա թե ինչո՞ւ մարդիկ աստղ ունին – տիեզերքի կարեկցության արցունքներն ունին...» տողով ավարտվող հատվածը, որոշ բնագրային փոփոխություններով՝ բացում է Ա բնագրի VII, ի դեպ, անվերնագիր մասը<sup>46</sup>:

Հնարավոր է նաև, որ «Յոթն օր...» կառույցին ներհյուսվեին շարքի այլ հատվածներ<sup>47</sup>:

«Հիշատակարան»-ում տեղ գտած վերոհիշյալ հատվածը միակը չէ, որ ուղղակի կամ անուղղակի առնչություն ունի «Յոթն օր...»-ին: Ու թեև երկի առանցքային-հիմնարար հերոս-հենի-հանճար-գերմարդ գաղափարը ձևակերպելու և հայեցակարգ մշակելու փորձերը «Հիշատակարան»-ում սկսվում են 1894-ից, սակայն գերազանցապես 1895–1898 թվականներին՝ «Յոթն օր...»-ի ստեղծագործական բուռն խմորումների, երկ-նախագծի վրա ակտիվ աշխատանքի ժամանակաշրջանին են վերաբերում այն բազմաթիվ գրառումները, տեքստերը կամ դրանց հատվածները, կտորները, որոնք բնագրային փոփոխություններով առկա են մասնավորապես Ա բնագրում, ինչպես նաև գաղափարական-գեղագիտական-խորհրդաբանական-ոճական առումով վերջինիս շատ հարազատ այն հատվածները, որոնք ակնհայտորեն երկի ծրագրային նշումներ և մշակումներ են:

Անդրադառնանք մի քանիսին:

Այսպես՝ 1895 թ. «Ապրիլի 18» գրառման առաջին հատվածը<sup>48</sup> ծավալվել ու շարունակվել է Ա բնագրի I երգում<sup>49</sup>:

1895 թ. մայիսի 14-ի գրառման «-Ես վազում եմ դեպի լույս - արևը, որ ստվերս իմ հետքից գա, որ իմ հետքից գաք դու՛ք, մարդի՛կ...» տողերը<sup>50</sup> գրեթե նույնությամբ կրկնվում են «Յոթն օր...»-ի երկու հատվածում<sup>51</sup>:

<sup>45</sup> Տե՛ս **Իսահակյան** 1977, 193–199: Առավել հավանական է, որ այն գրվել է նույն թվականի առաջին կեսին, ասել է թե՛ նախորդել է Ա բնագրին:

<sup>46</sup> Տե՛ս **Իսահակյան** 2014, 354 «Մայրի՛կ, երբ ես դեռ երեխա...» տողից մինչև 94-րդ պարբերությունը:

<sup>47</sup> Խոսքը մասնավորապես շարքի 12-րդ հատվածի 1-ին և 2-րդ՝ «Յոթն օր...»-ին հատկապես համահունչ պարբերությունների մասին է: (Տե՛ս **Իսահակյան** 2014, 332):

<sup>48</sup> **Իսահակյան** 1977, 174:

<sup>49</sup> **Իսահակյան** 2014, 340–343:

<sup>50</sup> **Իսահակյան** 1977, 185: Ի դեպ, ըստ Ավիկ Իսահակյանի, դրանք մեջբերում են Նիցշեից: (Տե՛ս **Իսահակյան** 2000, N 1, 54):

<sup>51</sup> Տե՛ս Ա բնագրի 39-րդ և 45-րդ պարբերությունները: (**Իսահակյան**, 2014, 344):

Ակնհայտորեն «Յոթն օր...»-ի համատեքստում է «1896 թ. <Գարուն>» գրառման «...Ողջ բնությունը ծովի լեզվով խոսում է ինձ հետ, երգում է ինձ համար, խորհում է իմ առաջ, իմ մեջ խոսում, երգում, խորհում է տիեզերքը...» և «Ես ամենամեծերից մեծն եմ, ամենափոքրերից փոքրը-տիեզերք եմ և կաթիլ...»<sup>52</sup> պարբերություններով պարփակված ծավալուն հատվածը, իսկ դրա մի փոքրիկ կտոր<sup>53</sup> եզրափակում է Ա բնագրի III՝ «Պար-երգ» մասի սկզբի չափածո հատվածը<sup>54</sup>:

Ա բնագրի մանրամասն քննությունը հիմք է տալիս ենթադրելու, որ «Յոթն օր...»-ի ծիրից են «Հիշատակարան»-ում 1896 թ. <Գարուն> գրառման՝ վերոհիշյալ հատվածին նախորդող «Դու այդ չես լսում...»<sup>55</sup> և «Անապատ է մեր կյանքը...»<sup>56</sup>, «Հունվարի 29, Ալեքսանդրապոլ» գրառման 2-4-րդ պարբերություններն ընդգրկող<sup>57</sup> և եզրափակիչ երեք հատվածները<sup>58</sup>: Պարզվում է՝ վերջիններից առաջինը որոշ բնագրային տարբերություններով «Դալար ու դալուկ տերևներ» շարքի II արձակ բանաստեղծությունն է<sup>59</sup>, որը հեղինակն առաջին և միակ անգամ ընդհանուր վերնագրով տպագրել է 1897 թվականին երեք այլ արձակ բանաստեղծությունների հետ՝ I «Ես ձեզ այնպիսի կտակներ կտամ...», III «Նա առավ իր սովերն ու...», IV «Դու՛, նազելի՛ս...»՝ դարձյալ առանց «Յոթն օր...»-ին հղելու<sup>60</sup>: Ի դեպ, նշվածներից I-ինի և III-ի տարբե-

<sup>52</sup> Տե՛ս Իսահակյան 1977, 232-233:

<sup>53</sup> ....Բաց էր իմ սիրտը և այն բացել էի մեծ ծովի առաջ:

Ծովը եռում էր - սիրտս եռում էր:

Ծովը սրտումս եռում էր:

Ծովը շաչում էր, փրփրում էր, լալիս:

Ծովը պարում էր - ծովը սրտումս էր շաչում, փրփրում, պարում, լալիս... (Իսահակյան 1977, 232):

<sup>54</sup> Տե՛ս Իսահակյան 2014, 345: Միակ փոփոխությունը վերջին տողում «շաչում, փրփրում, պարում, լալիս»-ի վերածվելն է «Պարում եմ, ես երգում եմ, ես լալիս»-ի:

<sup>55</sup> Իսահակյան 1977, 231-232: Որպես արձակ բանաստեղծություն տպագրվել է՝ Իսահակյան 2014, 372-373:

<sup>56</sup> Իսահակյան 1977, 232: Որպես արձակ բանաստեղծություն զետեղվել է՝ Իսահակյան 2014, 373:

<sup>57</sup> Իսահակյան 1977, 202-203:

<sup>58</sup> Իսահակյան 1977, 205:

<sup>59</sup> Տե՛ս Իսահակյան 2014, 13: Ստեղծագործության ծանոթագրության մեջ սրա մասին նշված չէ: (Տե՛ս Իսահակյան 2014, 897) Այդ առնչության մասին ոչինչ չկա նաև «Հիշատակարան»-ի ծանոթագրություններում (Իսահակյան 1977, 457-458):

<sup>60</sup> Աղբիւր 1897, օգոստոս-սեպտեմբեր, NN 8-9, 285-286:

### Ավետիք Իսահակյանի «հանրամարդկային»...

րակները ևս տեղ են գտել «Հիշատակարան»-ում՝ համապատասխանաբար «1896, մարտի 2»<sup>61</sup> և «1896թ. փետրվարի 17»<sup>62</sup> թվագրումներով:

«Յոթն օր...»-ին են վերաբերում նաև «Հիշատակարան»-ում տեղ գտած «1897թ. մայիսի 1» գրառման 2-5-րդ պարբերությունները<sup>63</sup>, 1897 թ. հունիսի 5-ի գրառումների մեծ մասը՝ «Այնտեղ, ուր սեգ վազում է օրենք-պետությունը, այնտեղ կաղում է մարդ-անհատը... ճշմարիտն են ասում ձեզ, իմ եղբայր-ներ...» պարբերությամբ սկսվող և «Մակ-մարդիկ պիտի շա՛տ տանջվեն երկրի վրա» նախադասությամբ ավարտվող հատվածը<sup>64</sup>: Վերջինը ոչ միայն պարունակում է Ա բնագրից հայտնի Արքայից-Արքայի, Հանճարի, Արտավազդի, Մակ-Մարդկանց, Չար-Չարի վերաբերյալ առանձին պարբերությունների մշակումներ, տարբերակներ, այլև հետևյալ բացառիկ ծրագրային նշումները.

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ «Դալուկ և դալար տերևներ» խորագրով 1897 թ. սեպտեմբերի վերջին տպագրված «Տե՛ս, իմ սրտում թափառում են դեղնած տերևները...» և «Ո՛վ ես դու, մենք քեզ չենք ճանաչում...» արձակ բանաստեղծությունների շարքը (Տե՛ս **Տարազ** 1897, 28 սեպտեմբերի, N 37, 577-578:) կարծես ծաղկաքաղ լինի «Յոթն օր...»-ից կամ նմուշների հավաքածու՝ ներկայացնելու երկի ատաղձին ներհյուսվելիք բովանդակությունը: Չնայած դրան՝ «Դալուկ և դալար տերևներ» շարքը ևս Իսահակյանը տպագրել է որպես առանձին գրական միավոր՝ որևէ կերպ չհուշելով «Յոթն օր...»-ի հետ ներքին-օրգանական կապը: (Տե՛ս **Իսահակյան** 2014, 13-15):

Ե՛վ այս, և՛ նշված այլ առանձին գործերի ու շարքերի դեպքում հեղինակի գործելաոճը կարող է ունենալ մի քանի պատճառ: Գլխավորը թերևս այն էր, որ քանի դեռ պատրաստ չէին ըստ մտահղացման «Յոթն օր...»-ի բոլոր բաղադրիչները, հեղինակը չէր կարող վերջնական որոշում կայացնել դրանք նախագծում ներառելու վերաբերյալ: Նախագծի վերջնական փուլում՝ միասնական կառույցում, բոլոր բաղադրիչների փոխապայմանավորված համակցության ընթացքում, անկասկած, խմբագրումներ էին լինելու, և միայն դրանից հետո պարզ կլինեք բաղադրիչների պատկանելությունը «Յոթն օր...»-ին: Իսկ մինչ այդ դրանք ինքնուրույն էին, անկախ:

<sup>61</sup> Տե՛ս **Իսահակյան** 1977, 214-215՝ «Հոգնեցի, հոգնեցի և սուգվա անտառի ծմակների մեջ...»-ով սկսվող և «և ես ձեր արծիվը կլինեմ...» տողով ավարտվող հատվածը, որը որպես այդպիսին տպագրվել է՝ **Իսահակյան** 2014, 492-493:

<sup>62</sup> Տե՛ս **Իսահակյան** 1977, 208-209՝ «Նա առավ իր սովերն և ընկավ ամայի սարերն ու ձորերը...» և «Բայց աստղերը համր են նրա համար, և աշխարհը՝ ձեր ու տաղտուկ...» տողերով պարփակված հատվածը: Այն որպես տարբերակ տպագրվել է՝ **Իսահակյան** 2014, 493:

<sup>63</sup> **Իսահակյան** 1977, 234: Դրանից մեկը՝ 2-րդ պարբերությունը, շարադասության փոքրիկ փոփոխությամբ բացում է «Յոթն օր...»-ի Ա բնագիրը: 3-րդ պարբերության մի տարբերակ է Ա բնագրի 98-րդ պարբերությունը. (Տե՛ս **Իսահակյան** 2014, 355):

<sup>64</sup> **Իսահակյան** 1977, 236-237: Այս գրառումները «Հիշատակարան»-ում ծանոթագրվել են հետևյալ կերպ. «Մտահղացված և անհայտ մի երկի ծրագրային նմուշներն են» (Տե՛ս **Իսահակյան** 1977, 458):

## Սարգսյան Մ.

«Նկարագրել և ծովի շուրջը: Թափառանքը:

Մեջը մտնեն՝ աշխարքի վերջը. որքան թարմ են, որքան չքնաղ են քու աչերը (1895 հուլիսին գրած): Ընկերիս պատահելը անտառում - քամին թափառում էր նոճիների մեջ, ես շրջում էի գերեզմաններում...

Գրվածքիս մեջը - անապատում մի գիշերվա երկար մոնոլոգ: - Գիշերվա երգ:

Գիրքը նվեր բոլոր «Տանջվող-ես»-երին.

Իմ Աստված - ես - սիրո երգը,

Ողջույն իմ «ես»-ին, ողջույն իմ «հոգուն»:

Վերջին գլուխները աշակերտների հետ պիտի խոսել<sup>65</sup>:

Թեև դրանցում բացակայում է ստեղծագործության վերնագիրը, սակայն, ինչպես վերևում նշված «կերպարների», այնպես էլ երկի հայեցակարգային այլ տարրերի հետ զուգադրումները հիմք են տալիս ամրագրելու, որ սրանք վերաբերում են «Յոթն օր...»-ին: Հիշատակված «Գիշերվա երգ»-ը շատ հավանական է՝ Ա բնագրի անվերնագիր VI մասի սկզբի չափածո մեծ հատվածն է՝ հերոսի՝ տիեզերքի Ոգի-Հոգու, Հանճարի, Գերմարդու, առանցքային գաղափարներն ու կենսադրույթները մուգ ու լուռ անապատում հնչեցնող մենախոսությունը<sup>66</sup>: «-Վերջին գլուխները աշակերտների հետ պիտի խոսել» գրառումն էլ ըստ երևույթին աշակերտների՝ Ոգի-Աստղերի, Ազատ Ուխտի ուխտավորների հետ ուսուցչի՝ Նոր-Կրոնի, Ազատ-Ուխտի Մեծ վարդապետի, Վեհ-Երգի, Վայրի-Կտակի բանակի առաջնորդի, Նոր-Կրոնի Սրբության զինվորի՝ Ա բնագրի XI. «Վրեժի երգ» մասի վերջին ոչ մեծ հատվածը զբաղեցնող երկխոսությունը<sup>67</sup> գրքի նաև այլ, նոր կառուցվածքային բաղադրիչների տեսքով ընդարձակել-ծավալելու ծրագրի մասին է:

Միաժամանակ հարկ է նշել, որ չի հաջողվել գտնել վերոհիշյալ գրառումներում ամրագրված ծրագրային մյուս կետերին առնչվող տեղեկություններ, նյութեր, ինչպես նաև հիշատակվող, ըստ Իսահակյանի, ավարտուն գործերը կամ կտորները, որոնք կլրացնեին գիրք-նախագծի ընդգրկումների պատկերը:

Հետագա տարիների գրառումները վկայում են, որ հեղինակը շարունակել է աշխատել «Յոթն օր ապատում, յոթն օր անապատում» «գրանդիոզ» «հանրամարդկային» նախագծի վրա: Ինչպես արդեն նշվել է, 1898 թ. օգոստոսին ամփոփել է արդեն արվածը, հստակեցրել երկի հայեցակարգը, սա-

<sup>65</sup> Իսահակյան 1977, 237–238:

<sup>66</sup> Իսահակյան 2014, 351–352:

<sup>67</sup> Իսահակյան 2014, 368–369՝ 187–195-րդ պարբերություն:

կայն չի վերջավորվել-ավարտվել գերմարդու իր փիլիսոփայություն-վարդապետությունը մշակելու և ինքնահատուկ գեղարվեստական կերպի ու ձևի բերելու ընթացքը: Կարճ ժամանակ անց Իսահակյանի փիլիսոփայության և գեղագիտության մեջ առանցքային է դարձել «Տիեզերական զանգ» խորհրդանիշ-հայեցակարգը, որը նույնանուն բանաստեղծությամբ<sup>68</sup> 1899 թ. սեպտեմբերին գեղարվեստականորեն ձևակերպվելուց հետո էլ գերիշխել է հեղինակի՝ տիեզերքի, մարդու և նրանց փոխհարաբերությունների գերբարդ համակարգին առնչվող մտորումներում, վերլուծություններում, եղել տիեզերք-անհատ-մարդկային հանրույթ փոխառնչության և փոխներգործության էությունը քննելու, ճանաչելու և պատկերը կերտելու հեղինակի հիմնաքարը, որի վկայությունն է նաև նույն վերնագրով մեկ այլ բանաստեղծության գոյությունը և դրան անդրադարձը 1919 թ.<sup>69</sup>:

Այսպիսով՝ արձանագրենք, որ 1900 թ. որոշակիորեն սրբագրվել է «Յոթն օր...»-ի հայեցակարգը. հերոս հանճար-գերմարդը դարձել է հրեղեն մարդ («Հանճարը հրեղեն մարդ է (Նիցշեի übermensch), հերոս է. հերոսը հրեղեն մարդ է»<sup>70</sup>), տիեզերական զանգ («Տիեզերքը զանգ է. ես լեզվակն եմ, հոգիս զանգ է, մարդը զանգ է, ամբոխը քարե զանգ է, հոգին զանգ է... զանգը զանգ է»<sup>71</sup>) մարգարե՝ այսպիսի առաքելությամբ. «Թափառել ժողովրդի մեջ և քարոզել նրան, հայտնել զանգի ղողանջները և մարգարեական ցնորքից ճանաչներ, ճառագայթներ գցել նրա վրա և ճանապարհ բանալ դեպի մարգարեական ցնորքը՝ լավ, պայծառ, ազատ օրերի նոր աշխարհը, նոր ապագան: Թափառել բնության մեջ, երգել բնությունը և ծովերի, անտառների, անապատների մեջ խորհել տիեզերական գաղտնիքների, մտքերի վերա, խորհել տիեզերքի և կյանքի վերա, և լսելով տիեզերքի հավերժական ղողանջները՝ քուն մտնել տիեզերական երազների մեջ...»<sup>72</sup>: 1903 թ. վերստին ազդարարվում է ճշմարտություն որոնելու նոր սկզբի մասին. «Ո՛վ եմ ես.- ճամփորդ, աշխարհի ճամփորդ, տիեզերական ճամփորդ, զանգի ղողանջը երգող, և գնում եմ ճշմարտություն գտնելու: Ազգերի հոգու մեջ կսուզվեմ, նրանց դարերի

<sup>68</sup> Խոսքը 1899 թ. սեպտեմբերին գրված և նույն թվականին տպագրված «Տիեզերական զանգ» բանաստեղծության մասին է: (Տե՛ս **Իսահակյան** 2003, 207):

<sup>69</sup> Խոսքը վերաբերում է «Տիեզերական զանգ (Նրա ղողանջները)» անտիպ բանաստեղծությանը, որի մի տարբերակը թվագրված է «1919, հուլիսի 6» (Տե՛ս **Իսահակյան** 2011, 185, 507–508):

<sup>70</sup> **Իսահակյան** 1977, 268:

<sup>71</sup> **Իսահակյան** 1977, 276:

<sup>72</sup> **Իսահակյան** 1977, 277:



պատմական հոգու մեջ, և օրենքներ կհանեն, վեհություններ կծծեն, ճշմարտություն, նոր հավատ, նոր կրոն, նոր գեղեցկություն գտնելու կերթամ»<sup>73</sup>:

Եվ ուրեմն, հավանական է, որ տարիների կենսական, հոգեմտավոր ճանաչողության փորձի, ստեղծագործական որոնումների արդյունքում «Յոթն օր...» նախագիծը փոխակերպվել է «Մարգարեն (Ձանգը, Կտակը)»-ի կամ «Նոր կտակ (Տիեզերական Ձանգ)»-ի: Համենայն դեպս, 1911–1932 թթ. «Գրեկիք նյութեր»-ի ցանկերում<sup>74</sup> նշված այս վերնագրերի, որպես բանալի բառերի, էական առնչակցությունը «Յոթն օր...»-ի առանցքային, հիմնարար գաղափարին և հայեցակարգային էությանը հնարավորություն են ընձեռում ավելի քան հիմնավոր համարելու վարկածը: Այդ փոխակերպումը չէր կարող չհանգեցնել երկ-նախագիծը վերկառուցելուն և ստեղծագործական ծրագրերից «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագիրը դուրս մղելուն: Սակայն ասվածը բնավ չի նսեմացնում, թեև անավարտ, սակայն տարիների աշխատանքով զոյացած-ձևավորված չափազանց ինքնատիպ և կարևոր նախագծի դերն ու նշանակությունը հեղինակի գեղարվեստական-փիլիսոփայական ժառանգության մեջ: Իսկ «Յոթն օր...»-ի լրացված տեքստը և համալրված համատեքստը, որ ընդգրկում-ներառում է չափածո և արձակ, տպագրված և անտիպ, ավարտուն և անավարտ բազմաթիվ ստեղծագործություններ, խոհեր, վերլուծություններ, կարող են ոչ միայն օգնել առավել համակողմանի ընկալելու նախագիծը, այլև նորովի ընթերցելու հեղինակի արդեն հայտնի գործերը, գրառումները և վերջապես, բացահայտելու կյանքի՝ անհատական, անձնական, ազգային և համամարդկային փորձություններով ու մարտահրավերներով գերհագեցած տվյալ փուլում երիտասարդ հայ գրող, բանաստեղծ, մտածող, գործիչ Ավետիք Իսահակյանի տիեզերք-մարդ չափազանց յուրօրինակ մոդելը՝ դրանում իր գլխավոր, համամարդկային դերակատարմամբ, և գնահատելու համարժեք գեղարվեստական, փիլիսոփայական, քարոզչական խոսքի բազմազան-բազմաձև համագուգակցմամբ այն պատկերելու համարձակ փորձը:

### **Եզրակացություն**

Ավ. Իսահակյանի «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում»-ը բացառիկ ստեղծագործական նախագիծ է ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության ծիրում: Այն մտահղացվել է իբրև գրական-փիլիսոփայական-

<sup>73</sup> Իսահակյան 1977, 296:

<sup>74</sup> Տե՛ս ԳԱԹ, ԱԻՖ 791–II և ԳԱԹ, ԱԻՖ 9–II, 5:

### **Ավետիք Իսահակյանի «հանրամարդկային»...**

գաղափարաբանական-քարոզչական երկ՝ նոր վարդապետություն ներկայացնող «գրանդիոզ» և «հանրամարդկային» գիրք՝ բազմաբաղադրիչ բնագրային կառույց, որը պիտի կազմված լիներ տարասեռ առանձին մասերից և համագուգակցեր արձակ ու չափածո բանաստեղծություն, քարոզ, գրույց և այլաբնույթ այլ տեքստեր: Ուստի և այն չէր կարող ամփոփվել որևէ ժանրի սահմաններում: Նախագիծն ավարտին չի հասել, չկա երկի-գրքի ամբողջական, ավարտուն բնագիր, սակայն հնարավոր է բնագրային խճանկարի համալրում: «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում» վերնագրով բնագրերը, դրանց և հեղինակի այլ ստեղծագործությունների բացահայտված ուղղակի և անուղղակի առնչությունները հիմք են տալիս ենթադրելու, որ առնչությունների շրջանակն ավելի լայն է և կարող է ներառել Իսահակյանի տպագիր և անտիպ ժառանգության այլ նմուշներ: Նախագիծը մտահղացման ու իրականացման տևական ընթացքում փոփոխվել է հեղինակի փիլիսոփայական-գեղագիտական որոնումներին զուգահեռ, բայց պահպանել է իր առանցքային նշանակությունը: Եվ ուրեմն՝ «Յոթն օր ապատում, յոթն գիշեր անապատում»-ի հետագա ուսումնասիրությունը կարևոր է Ավետիք Իսահակյանի անհատականությունը համակողմանիորեն հասկանալու, նրա հայտնի ու անհայտ որոշ ստեղծագործությունների համատեքստն ուրվագծելու, դրանք նորովի ընթերցելու, արժևորելու առումով:

### **ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Աղբիր** 1897, օգոստոս-սեպտեմբեր, NN 8–9, Թիֆլիս, էջ 285–286:

**Ավետիսյան Ա.** 1975, Նորահայտ էջեր Ավ. Իսահակյանի ժառանգությունից, Սովետական գրականություն, N 9, Երևան, էջ 103–104:

**Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի ֆոնդ (ԳԱԹ, ԱԻՖ)** 1–II ք, 3–II, 8–I, 9–II, 254–II, 791–II:

**Ջաքարյան Մ.** 1999, Ավետիք Իսահակյանի «Հիշատակարանը», Երևան, «Նահապետ» հրատ., 312 էջ:

**Իսահակեան Ա.** 1898, Երգեր ու վերքեր, Աղեքսանդրապոլ, տպ. Գեորգ Ս. Սանոյեանցի, 64 էջ:

**Իսահակեան Ա.** 1903, Բանաստեղծություններ, Բագու, տպ. Արօր, 126 էջ:

**Իսահակեան Ա.** 1908, Երգեր ու վերքեր, Թիֆլիս, տպ. Հերմէս, 287 էջ:

**Իսահակյան Ավետիք** 1973, Երկերի ժողովածու, հ. առաջին, Երևան, «Հայաստան» հրատ., 463 էջ:

**Իսահակյան Ավետիք** 1977, Հիշատակարան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 471 էջ:

## Սարգսյան Մ.

**Իսահակյան Ավետիք** 2003, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 847 էջ:

**Իսահակյան Ավետիք** 2011, Երկերի լիակատար ժողովածու, հ. երկրորդ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 627 էջ:

**Իսահակյան Ավետիք** 2008, Երկերի լիակատար ժողովածու, հ. չորրորդ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 731 էջ:

**Իսահակյան Ավետիք** 2014, Երկերի լիակատար ժողովածու, հ. հինգերորդ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 992 էջ:

**Իսահակյան Ավետիք** 2020, Երկերի լիակատար ժողովածու, հ. տասներեքերորդ, Երևան, «Էդիթ Պրինթ» հրատ., 720 էջ:

**Իսահակյան Ա.** 2000, Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն, գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 601 էջ:

**Իսահակյան Ա.** 2000, Իսահակյանի խոհական աշխարհի ձևավորումը և Նիցշեի վարդապետությունը, Երևան, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 51-68:

**Ինճիկյան Ա.** 1977, Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 257 էջ:

**Մուշեղյան Ա.** 1983, Ավետիք Իսահակյան: Վաղ տարիներ (1875-1898), Երևան, «Սովետական գրող» հրատ., 296 էջ:

**Նիցշե Ֆրիդրիխ** 2015, Այսպես խոսեց Զրադաշտը, Երևան, «Անտարես» հրատ., 612 էջ:

**Սովետական գրականություն** 1975, N 9, Երևան, էջ 107-109:

**Վարդանյան Ա.** 2006, Ավ. Իսահակյանի անտիպ էջերից, Երևան, Գրականագիտական հանդես, Ա(Ե), էջ 233-241:

**Տարազ** 1897, 28 սեպտեմբերի, N 37, Թիֆլիս, էջ 577-578:

**Nietzsche Friedrich** 1907, Also sprach Zarathustra: Ein Buch für Alle und Keinen, Leipzig, C. G. Naumann, 510 Seiten.

## «ВСЕЧЕЛОВЕЧЕСКИЙ» И «ГРАНДИОЗНЫЙ» ТВОРЧЕСКИЙ ПРОЕКТ АВЕТИКА ИСААКЯНА

ՏԱՐԿԻՍՅԱՆ Մ.

### Резюме

**Ключевые слова:** творческий проект, философская доктрина, модель все-ленная-человек, эскиз концепции, многокомпонентная структура, контекст произведения, «Семь дней среди людей, семь ночей в пустыне».

Творческий проект Аветика Исаакяна «Семь дней среди людей, семь ночей в пустыне» – исключительный в своем роде не только в армянской, но и мировой литературе. Он был задуман как литературно-философско-

идеолого-проповедническое произведение, «грандиозная» и «всечеловеческая» книга, представляющая новое учение, как многокомпонентная оригинальная структура, которая должна была состоять из отдельных частей, сочетающих в себе прозу и стих, проповедь, сказание и иные тексты. Поэтому он не вписывался ни в один жанр. Проект не закончен, полного, завершённого оригинала книги нет, но есть возможность дополнить текстовую мозаику. Тексты под названием «Семь дней среди людей, семь ночей в пустыне», прямые и косвенные связи между ними и другими произведениями автора дают основания предположить, что диапазон родства шире и может включать в себя другие образцы изданного и неизданного наследия Исаакяна. Проект редактировался на стадии замысла и его реализации параллельно философско-эстетическим исканиям автора, но при этом сохранил свое ключевое значение. Таким образом, изучение проекта «Семь дней среди людей, семь ночей в пустыне» важно в плане всесторонней оценки личности Аветика Исаакяна, очерчивания контекста ряда известных и неизвестных произведений писателя, их перечитывания и нового осмысления.

## THE GRAND CREATIVE PROJECT BY AVETIK ISAHAKYAN FOR “ALL MANKIND”

SARGSYAN M.

### Summary

**Key words:** creative project, philosophy-doctrine, universe-human model, concept sketch, multi-component structure, context of the work, “Seven Days in the Desert, Seven Nights in the Desert”.

Avetik Isahakyan's creative project “Seven Days in the Desert, Seven Nights in the Desert” is exceptional in its kind not only in Armenian, but also world literature. It was conceived as a literary-philosophical-ideology-preaching work, a grand book “for all mankind”. It was meant to present a new doctrine, a structure consisting of separate parts, combining prose and verse, sermon, legend and various other texts. Hence, it couldn't fit into any genre.

### **Սարգսյան Մ.**

---

The project is not finished, there is no complete original of the book, but there is a possibility to fill up the text mosaic. The texts titled “Seven Days in the Desert, Seven Nights in the Desert” and direct and indirect links between them and other works by the author give reason to believe that the range of kinship is broader and may include other samples of the published and unpublished heritage of Isahakyan. The project was edited both at the stage of conception and realization in parallel with the writer's search of philosophical and aesthetic interpretations of his ideas, though he never abandoned the idea of the key importance of the work. Thus, the study of “Seven Days in the Desert, Seven Nights in the Desert” is essential for acquiring comprehensive evaluation of Avetik Isahakyan's personality, outlining the context of some of his known and unknown works, re-reading and re-interpreting them anew.